

ԱՄԵՆՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՉԸ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ Ի ՆՊԱՍՏ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

Հաճելի է Մեզ վերստին գրել Ձեզ, Մեր սիրո ողջույնին հետ միատեղ բերելու համար Ձեր սիրելության Մեր խոհերն ու ապրումները միջազգային այն նոր իրադրության առնչությամբ, որ մեր բոլորիս հուսացյալ հոգիները կլեցնե ուրախությամբ և լավատեսությամբ:

Կխոհիհք, թե Մենք պարտիհք Մեր ուրախությունը արտահայտել ամեն բարի առիթներով, երբ միջազգային կյանքը կմտնե խաղաղության աստվածահաճո հունի մեջ և երբ ժողովուրդներուն առջև կբացվին նոր և լուսափայլ հեռանկարներ խաղաղ գոյակցության, բարեկամության և շինարար հառաջդիմության:

Միջազգային կյանքի մեջ այսպիսի երջանիկ իրադրություն է ստեղծված վերջին ամիսներու ընթացքին, իբրև հետևանք Սովետական Միության առաջադրանքներուն՝ հոգուտ աշխարհի խաղաղության ամրապնդման և ընդհանուր ու ամբողջական զինաթափման:

Ինչպես ծանոթ է Ձեզ, իբրև Հովվապետ Հայ Եկեղեցվո, տարվույս հոկտեմբեր ամսու կոչով Մենք ողջունեցինք Միացյալ Նահանգներու և Սովետական Միության մեծարգո ղեկավարները, աղոթելով, որ Տերը զորավիգ կանգնի անոնց բարի կամեցողությանց և հաջողությամբ պսակե անոնց սկսած մարդասիրական վսեմ գործը:

Մենք խորապես մխիթարված ենք, որ երկու մեծ պետություններու ղեկավարներու հանդիպման այս իրադրությունը ոգեշնչած է բոլորին, աշխարհի բոլոր ծագերուն տակ, և մարդկությունը ապահովության լայն շունչ կքաշե այսօր, տևական և վերջնական խաղաղության իդեալով գոտեպնդված: Ուրախ ենք մանավանդ, որ հետզհետե իրենց հեղինակավոր խոսքով հանդես կուգան հանուն խաղաղության և ընդհանուր զինաթափման օգտին նաև եկեղեցիներու պետեր և հայտնի եկեղեցական դեմքեր: Այս գործին մեջ լավագույն օրինակը կուտա Մեր սիրեցյալ Եղբայր ի Քրիստոս Նորին Գերաշնորհություն Քենտրբերիի Արքեպիսկոպոս դոկտ. Ջեոֆֆրի Ֆիշերը:

Ինչպես-որ տեղյակ եք, մեր եկեղեցին ևս, մանավանդ Ս. Էջմիածնի բարձունքին, միշտ իր ձայնը լսելի դարձուցած է վասն խաղաղության աշխարհի:

Մեր խոսքը և գործը վասն աշխարհի խաղաղության կրխի նախ մեր քրիստոնեական խղճեն և նաև մեր բազմաշարաշար ժողովուրդի ողբերգական պատմության փորձեն:

Անա թե ինչու Մենք անվարան կերպով Մեր ձայնը պետք է բարձրացնենք միշտ և ամեն առթիվ ճոգուտ խաղաղության դատին, ճոգուտ զինաթափման, ճոգուտ ժողովուրդներու տևական բարեկամության և շինարար գործակցության, այն ճաստատ ճամոզումով, թե ամեն տեսակի քաղաքական ճարցեր և արդար դատեր կարելի պիտի ըլլա լուծել ճամբերությամբ, խաղաղ ճանապարճով, փոխադարձ փոխըմբռնումով և արդարության զգացումով:

Պատերազմ, երբե՛ք, և ո՛չ ոքի դեմ. այս է և այս պետք է ըլլա փրկարար կարգախոսը և գործելու ուղին բոլորին ճամար, բոլորիս ճամար, ամեն մեկս մեր դիրքերեն, ամեն մեկս մեր ուժերով:

Զեզ ճաղորդակից դարձնելով Մեր այս մտածումներուն և ճույզերուն, վստաճ ենք, թե անոնք նաև Ձեր մտածումներն ու ճույզերն են, և ճամոզված ենք, թե Դուք ևս Ձեր պայմաններու և ճնարավորությանց սաճմանին մեջ Ձեր ձայնը լսելի պիտի դարձնեք ի նպաստ խաղաղության և ընդճանուր ու լրիվ զինաթափման սրբազան դատին: Այս է պատգամը՝ մեր Տիրոջ Սուրբ Ավետարանին և մեր ժողովուրդի պատմության գրքին, ուղղված մեզ բոլորիս, այժմ և միշտ:

«ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՀԵՌԱՒՈՐԱՑ, ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՄԵՐՁԱՒՈՐԱՑ», «ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԵՑՈՒՆ»:

«ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՇՆՈՐՀՔ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՂԻՑԻՆ ԸՆԴ ՁԵԶ, ԱՄԷՆ»:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ